ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

*Համարը* N 119-Ն
*Տիպը* Հրաման
*Սկզբնաղբյուրը* ՀՀԳՏ 2017.05.20/16(585).1 Հոդ.177.6
*Ընդունող մարմինը* Բնապահպանության նախարար
*Ստորագրող մարմինը* Բնապահպանության նախարար
*Վավերացնող մարմինը*
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 30.05.2017
*Տեսակը* Հիմնական
*Կարգավիճակը* Գործում է
*Ընդունման վայրը* Երևան
*Ընդունման ամսաթիվը* 05.05.2017
*Ստորագրման ամսաթիվը* 05.05.2017
*Վավերացման ամսաթիվը*
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 28-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***«Գրանցված է»***
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
*11 մայիսի 2017 թ.*
*Պետական գրանցման թիվ 10517180*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**5 մայիսի 2017 թ.** **N 119-Ն**
**ք. Երևան**

# Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 28-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով, «Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի «ե)» ենթակետով և 14-րդ հոդվածի 5-րդ պարբերությամբ.

***Հրամայում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2004 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքի վարման կարգը և Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքի հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 28-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի «ա)» կետով հաստատված N 1 հավելվածի՝

ա. 9-րդ կետում «կենսառեսուրսների կառավարման գործակալությունը» բառերը փոխարինել «շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության վարչությունը» բառերով.

բ. 18-րդ կետի «13» թիվը փոխարինել «15» թվով.

2) հրամանի «բ)» կետով հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Նախարար Ա. Մինասյան

Հավելված
ՀՀ բնապահպանության նախարարի
5 մայիսի 2017 թ.
N 119-Ն հրամանի

«Հավելված N 2
Հաստատված է
ՀՀ բնապահպանության նախարարի
16 փետրվարի 2004 թ.
N 28-Ն հրամանով

## ԿԱԶՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | |
|---|---|
| Ա. Մինասյան | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար (հանձնաժողովի նախագահ), |
| Ս. Պապյան | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ (հանձնաժողովի նախագահի տեղակալ), |
| Խ. Հակոբյան | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի տեղակալ, |
| Ա. Թարզյան | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության պետ, |
| Գ. Մանուչարյան | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար), |
| Ռ. Գրիգորյան | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության վարչության կենսաբազմազանության և կենսաանվտանգության պահպանության քաղաքականության բաժնի պետ, |
| Ս. Բալոյան | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության կենդանական ռեսուրսների կառավարման բաժնի պետ, կենսաբանական գիտությունների թեկնածու, |
| Բ. Գաբրիելյան | Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, |
| Հ. Խաչատրյան | Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտքարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, |
| Մ. Քալաշյան | Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի միջատաբանության և բնահողի կենդանաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու, |
| Մ. Ղասաբյան | Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ողնաշարավոր կենդանիների կենդանաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու, |
| Մ. Առաքելյան | Երևանի պետական համալսարանի կենդանաբանության ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, |
| Ա. Ղազարյան | Երևանի պետական համալսարանի կենդանաբանության ամբիոն, կենսաբանական գիտությունների թեկնածու, |

| | |
|---|---|
| Խ. Պիպոյան | Խ. Աբովյանի անվան հայկական պետական համալսարանի կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, |
| Կ. Մանվելյան | Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն:»: |